ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2017

10-րդ դասարան

Ա: Աշխատանք բնագրով: (15 միավոր)

Սեպտեմբերի տասին Պարրոտը, Աբովյանը և մյուսները հրաժեշտ են տալիս Էջմիածնին և ստվարացած պահակախմբի ուղեկցությամբ անցնելով Գայանեի վանքի մոտով՝ ուղղությունն են վերցնում դեպի մայր Արաքս գետը: Մինչև Արարատի ստորոտը նրանց հետ գնում են մի քանի աշխարհական անձինք և հայերի մի հոծ բազմություն, որոնք ցուցադրում էին ռազմի խաղեր: Պարրոտի հոգին լցվում էր ցնծությամբ և խորին երախտագիտությամբ: Խայտաբղետ քարավանը շարժվում էր առաջ, իսկ Պարրոտը մտքով ու հոգով Արարատի՝ բիբլիական լեռան հետ էր: Արշավախումբը գնում էր այն անձկալի վայրերով, ուր, ինչպես կարծում էր Պարրոտը, ըստ Ծննդոց գրքի և բիբլիական ավանդության, ջրհեղեղից հետո Նոյն սկսում է տնկել հուռթի այգիներ: Երբ ուժերը հատնում են , դադար են առնում Ակոռիի բերրի այգիների, ակութների մոտ՝ կղմինդրե տանիքներով. հարկավոր էին ուժեղ մարդիկ՝ հուժկու բազուկներով,ու գրաստներ՝ բեռները մինչև Սուրբ Հակոբի վանք հասցնելու համար:Տանուտերը՝ բարյացակամ, գիրթ շարժումներով մի հաղթանդամ տղամարդ, կանչում է պարթևահասակ գյուղացիներին, բերում են նաև համետած եզներ: Պարրոտին Հայաստանը թվաց ավետյաց երկիր:

1. Գրե՛ք՝ որտեղից է առաջացել **սեպտեմբեր** ամսանունը. տվե՛ք ծագման մեկնաբանությունը: **(2 միավոր)**
2.Գրե՛ք Խաչատուր Աբովյանին վերաբերող շրջասությունները: **(2 միավոր)**
3.Նշե՛ք՝ որտեղից է ծագում **« Ավետյաց երկիր»** արտահայտությունը,և երբ է այն կիրառվում: **(2 միավոր)**
4.Գրե՛ք **երախտագիտություն, հատնել, տանուտեր, ավանդություն** բառերի հարանունները և բացատրե՛ք իմաստները: **(2 միավոր)**
5.**Անձկալի, հուռթի, ակութ, գրաստ** բառերի դիմաց գրե՛ք մեկական հոմանիշ բառ: **(2 միավոր)**
6.Տեքստում որո՞նք են **ջլապինդ , աղյուսե, ընդոստ,թամբել, խայտաճամուկ** բառերի հոմանիշները: **(2 միավոր)**
7. **Հետ, առաջ, մոտ, մինչև** բառերը տեքստում ո՞ր խոսքի մասերի արժեքներով են գործածված :Ուրիշ ի՞նչ խոսքիմասային պատկանելություն ունեն նշված բառերը: **(2 միավոր)**
8.Դո՛ւրս գրեք բուն բացահայտիչ պարունակող նախադասությունը և այն վերածե՛ք մասնական բացահայտչի: **(1 միավոր)**

Բ. Շարադրություն՝ «Կարոտի կանչով» վերնագրով (երկու էջի սահմաններում) : (5 միավոր)

Հանրապետական օլիմպիադայի նախագահ՝ մ.գ.թ., դոցենտ Գ. Խալաթյան